

ԾՐԱԳԻՐ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱԴՐԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) Հայաստանի Հանրապետության գիտական ներուժի վերարտադրության արդյունավետ համակարգ ստեղծելուն ուղղված միջոցառումների ու դրանց արդյունավետության գնահատման նպատակային ցուցանիշների ամբողջություն է:

2. Ծրագրի նպատակն է՝ ապահովել ՀՀ գիտության ոլորտի կադրային ներուժի արդյունավետ վերարտադրությունը, նպաստել գիտության ոլորտը բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետներով համալրելուն՝ ստեղծելով երիտասարդ գիտնականների ստեղծագործական ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար անհրաժեշտ պայմաններ և երաշխիքներ:

3. Ծրագրի ընդունման անհրաժեշտությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրերում:


II. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Ներկայումս Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի առջև ծառայած կարևորագույն խնդիրներից է գիտական ավանդույթներ ունեցող և միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցների պահպանումը, ինչպես նաև հանրապետության կարիքների բավարարման համար անհրաժեշտ նոր հետազոտական ուղղությունների կայուն զարգացման կադրային հենքի ապահովումը: Անկախության տարիներին հանրապետության գիտության ոլորտը ենթարկվեց կառուցվածքային և կադրային փոփոխությունների, որոնց պատճառը գիտական մի շարք ուղղությունների նկատմամբ պահանջարկի բացակայությունն էր և մնացած մասի՝ մինչ այսօր շարունակվող թերֆինանսավորումը: Որպես արդյունք՝ տեղի ունեցավ և շարունակվում է գիտական

կադրերի, առաջին հերթին երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում՝ նաև արտերկիր: Ընդ որում, «ուղեղների» ներքին արտահոսքը, երբ հեռանում են ոլորտից, մնում են հանրապետությունում, բայց սկսում են աշխատել այլ բնագավառներում, շատ անգամ ավելի վտանգավոր է, քանի որ այդ կադրերը, որպես կանոն, վերջնականապես հեռանում են գիտությունից: Գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները բերեցին գիտության արագ «ծերացմանը» և մասնագիտական մակարդակի որակական փոփոխությանը, խախտվեցին գիտական և գիտամանկավարժական դպրոցների շարունակականությունն ու սերնդափոխության սահուն ընթացքը:

5. Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում պետք է ձևավորել և ներդնել գիտական աշխատողի կարիերայի շարունակական զարգացման մեխանիզմ: Այդ կարիերայի առաջին քայլն ասպիրանտուրան է, երբ ուսանողը ձեռք է բերում գիտական աշխատանքով զբաղվելու հմտություններ: Երկրորդը՝ հետդոկտորանտուրան է, երբ գիտական թեզը նոր պաշտպանած անձանց գիտական աստիճան ստանալուց հետո 5 տարվա ընթացքում հնարավորություն է տրվում ստանալու հետդոկտորանտի կարգավիճակ որոշակի ժամկետով (որպես կանոն երկու տարի՝ մեկ տարի ավելացնելու հնարավորությամբ)՝ մասնագիտական հմտությունները հետագայում զարգացնելու և գիտական կամ գիտակրթական ոլորտներում ապագա մասնագիտական գործունեության իրականացման հարցում վերջնական որոշում կայացնելու համար: Երրորդ քայլը գիտական աշխատողի տարբեր տարակարգերի պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն ունենալն է, ինչը ենթադրում է բոլոր փուլերում եվրոպական չափանիշներին մոտ աշխատանքի վարձատրություն, մրցութային կարգով աշխատանքային կարիերայի հաջորդ մակարդակին անցնելու հնարավորություն, որը ոչ ձևականորեն հաշվի է առնելու մասնագիտական ձեռքբերումները, և տարբեր կազմակերպությունների մրցույթներին մասնակցելու միջոցով աշխատավայրի ընտրության հնարավորությունը: Նոր կադրային քաղաքականության անցնելը պահանջում է զգալի ժամանակ, սակայն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստումը, մասնավորապես, հետդոկտորանտուրային ինստիտուտի ներդրումը և ասպիրանտների ու հետդոկտորանտների աջակցությունը և գիտական ատենախոսության պաշտպանությունից հետո ընկած ժամանակահատվածում (հետդոկտորանտուրա) երիտասարդ կադրերի աջակցությունը պետք է ուղղված լինեն ապագայում այդպիսի համակարգին անցնելուն:

6. 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված են 6 056 աշխատողներ, որոնցից 3 950-ը գիտաշխատողներ են և 2 572-ը ունեն գիտական աստիճան: Գիտաշխատողներից 1 114-ի կամ ընդհանուրի 28.2%-ի և գիտական աստիճան ունեցողների 910-ի կամ ընդհանուրի 35.4%-ի տարիքը բարձր է 65-ից: Գիտական աստիճան ունեցողների տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ 35-55 տարիքային միջակայքում առաջացել է մինիմում, որի վերացումը գիտության ոլորտի առջև ներկայումս ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է (տե՛ս Գծապատկեր 1):



Գծապատկեր 1: 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող աշխատողների թվաքանակի տարիքային բաշխումը:

Եթե համեմատենք գիտության ոլորտի կադրային ներուժը 1991 և 2018 թվականներին, ապա 2018 թվականին պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների թիվը 1991 թվականի համեմատ կրճատվեց շուրջ 72%-ով կամ 6 670 մարդով. այն 1991 թվականին 9 238 էր, իսկ 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ 2 572 (տե՛ս Աղյուսակ 1): Ընդ որում, 1.8 անգամ կրճատվեց գիտական աստիճան ունեցողների մասնաբաժինը 35-54 տարիքային միջակայքում. 1991 թվականին այն 5 014 մարդ էր և կազմում էր ընդհանուրի 54.3%-ը, իսկ 2018 թվականին՝ համապատասխանաբար 764 և 29.7%-ը: Միևնույն ժամանակ մինչև 35 տարեկանների մասնաբաժինը 2018 թվականի համար գերազանցում է 1991 թվականի ցուցանիշը. 2018 թվականին այն կազմել է

ընդհանուրի 15.3%-ը, իսկ 1991 թվականին՝ 10.2%-ը: Հետևաբար, գիտական կադրերի պատրաստման և մինչև 35 տարեկան գիտական աշխատողների խրախուսման գործող համակարգը հարաբերական թվերով ապահովում է անհրաժեշտ թվաքանակը, բայց չի նպաստում ոլորտում երիտասարդ գիտնականների հետագա ամրապնդմանը: Վերջինս իր հերթին պայմանավորված է ինչպես գիտական կադրերի պատրաստման համակարգի ներքին թերություններով ու անմիջապես գիտական թեզի պաշտպանությունից հետո երիտասարդ գիտական աշխատողների աջակցության համակարգային ծրագրի բացակայությամբ, այնպես էլ՝ ընդհանրապես գիտական աշխատողի աշխատանքային և սոցիալ-տնտեսական ոչ բավարար պայմաններով, աշխատանքային կարիերայի շարունակական զարգացման արդարացի մեխանիզմների բացակայությամբ և հասարակության մեջ գիտության գրավչության ու հեղինակության ոչ բարձր մակարդակով:

Տարիքային միջակայք, տարեկան	1991թ.		2018թ.	
	Թվաքանակ, մարդ	Մասնաբաժին, տոկոս	Թվաքանակ, մարդ	Մասնաբաժին, տոկոս
մինչև 25	12	0.1%	3	0.1%
25-34	941	10.2%	394	15.3%
35-44	2 398	26.0%	484	18.8%
45-54	2 616	28.3%	280	10.9%
55-64	1 962	21.2%	501	19.5%
65-74	743	8.0%	576	22.4%
75 և բարձր	566	6.1%	334	13.0%
Ընդամենը	9 238	100.0%	2 572	100.0%

Աղյուսակ 1. Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների թվաքանակն ըստ տարիքային 6 խմբերի՝ 1991 և 2018 թվականների համար:

7. Ասպիրանտական տեղերի բաշխման փաստերով հիմնավորված մեխանիզմի բացակայությունը հնարավորություն չի տալիս ընտրելու այն երիտասարդներին, որոնք նպատակադրված են ապագայում ևս աշխատելու գիտության ոլորտում և որոնց մասնագիտական աճի համար հանրապետությունում առկա են համապատասխան պայմաններ, այն է՝ իրականացվում են միջազգային մակարդակին համապատասխանող գիտական հետազոտություններ: Այսպես, ըստ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018»-ի տվյալների¹՝ 2017 թվականին հանրապետության գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր 1 085 ասպիրանտ, որոնցից 192-ը ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական, բժշկական գիտությունների և դեղագիտության բնագավառներում (17.7%), իսկ 480-ը՝ հասարակական գիտությունների (44.2%) և դա այն դեպքում, երբ

¹ <https://www.armstat.am/am/?nid=586&year=2018>

հանրապետության գիտական աշխատողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրապարակված և միջազգային հեղինակավոր առաջատար գիտավերլուծական կայքերում ընդգրկված գիտական աշխատությունների ճնշող մեծամասնությունը ֆիզիկայի, աստղագիտության, կյանքի մասին գիտությունների և քիմայի բնագավառին են վերաբերում: 2014-2018 թվականներին Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային առաջատար՝ Վեբ օֆ Սայնս (Web of Science) գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական հանդեսներում հրապարակվել է ընդհանուր 5 194 հոդված, որոցից 3 492-ը ֆիզիկական գիտություններ, 1 163-ը՝ կյանքի մասին գիտությունների, 826-ը՝ ճարտարագիտության և տեխնոլոգիաների (այդ թվում՝ գիտափորձերի նկարագրությունները), 281-ը՝ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում՝ ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանի տվյալների²:

8. Գիտական ներուժի վերարտադրության բնագավառում առկա են հետևյալ հիմնախնդիրները՝

1) գիտական կադրերի պատրաստման փաստերով հիմնավորված պետական պատվերի ձևավորման մեխանիզմի բացակայությունը.

2) գիտական ատենախոսությունների ցածր մասնագիտական մակարդակը, դրանց մեծամասնության թեմաների անհամապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գիտության և տնտեսության պահանջներին.

3) գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման ժամանակակից մեխանիզմների բացակայությունը.

4) ասպիրանտների և երիտասարդ գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը.

5) ասպիրանտների անհատական խրախուսման և երիտասարդ գիտական աշխատողների հետազոտությունների աջակցության ոչ բավարար մակարդակը.

6) գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավման, այդ թվում՝ գիտական ենթակառուցվածքների արդիականացման անհրաժեշտությունը.

7) գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի ոչ գրավիչ լինելը:

² Հոդվածներն ըստ հետազոտության առակայի (subject) դասակարգելիս միևնույն հոդվածը կարող է ներկայացվել որպես մեկից ավելի բնագավառների/մասնագիտությունների հրապարակում, եթե այն պարունակում է տարբեր մասնագիտությունների հետազոտությունների էլեմենտներ:

III. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

9. Գիտական ներուժի վերարտադրության բնագավառում առկա հիմնախնդիրների առաջնահերթ լուծումները՝

1) **ձևավորել գիտական կադրերի պատրաստման փաստերով հիմնավորված պետական պատվերի մեխանիզմ, մշակել և ներդնել գիտական կադրերի պահանջարկի և առաջարկի գնահատման չափանիշներ ու չափորոշիչներ:** Գիտական կադրերի պատրաստման պետական պատվերը պետք է ուղղված լինի նպաստելու արդեն իսկ կայացած գիտական դպրոցների պահպանմանն ու զարգացմանը, Հայաստանի Հանրապետության տնտեսության կարիքներից բխող և (կամ) միջազգային մակարդակին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող բնագավառների առաջնահերթ համալրմանը, գիտական և գիտամանկավարժական կադրերի արդյունավետ վերարտադրության ապահովմանը՝ ըստ Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների: Անհրաժեշտ է մշակել ասպիրանտական տեղերի հատկացման համապատասխան չափանիշներ և չափորոշիչներ՝ նպատակ ունենալով ասպիրանտուրայում ընդգրկել գիտությունը որպես ապագա մասնագիտություն ընտրած երիտասարդների և առաջնայնությունը տալ այն բնագավառներին, որտեղ հանրապետությունն ունի կամ կարող է ունենալ իր ուրույն տեղը համաշխարհային գիտական «շուկայում»: Ասպիրանտական ուսուցումը կարելի է կազմակերպել տնտեսության մասնավոր հատվածի հետ համատեղ՝ սահմանելով պետական նպատակային և մասնավոր հատվածի պատվերով ձևավորվող ասպիրանտական տեղեր:

2) **բարձրացնել արենախոսությունների մասնագիտական մակարդակը, դրանց թեմաները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններին ու տնտեսության պահանջներին:** Պետք է մշակել մեխանիզմներ՝ ուղղված գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ու դրանց գիտական խորհուրդների դերի և պատասխանատվության բարձրացմանը գիտական աստիճանաշնորհման գործընթացում, մասնավորապես, ատենախոսական թեմաները պետք է ընտրվեն Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ու տնտեսության պահանջներին համահունչ: Ատենախոսական թեմայի կատարման պատասխանատվությունը պետք է կրեն ասպիրանտը, ղեկավար(ներ)ը և ատենախոսության

կատարման վայր հանդիսացող կազմակերպությունը կամ բուհը: Զուգահեռաբար պետք է խստացնել ատենախոսություններին առաջադրվող չափանիշները, մասնավորապես, ատենախոսության հիմնական արդյունքների հրապարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ընտրության հարցերում: Բացի դրանցից, պետք է բարձրացնել նաև գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդների դերն ու պատասխանատվությունն ատենախոսությունների պատշաճ մասնագիտական մակարդակի պահպանման հարցում.

3) **ներդնել գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման ժամանակակից եղանակներ:** Առաջին հերթին պետք է ներդնել գիտության վրա հիմնված բարձրագույն կրթություն և համալսարաններում ավելացնել հետազոտական բաղադրիչը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նմանատիպ մոտեցման դեպքում համալսարաններում հնարավոր է անհամեմատ ավելի բարձր արդյունավետությամբ զուգակցել ուսուցման գիտական և կրթական բաղադրիչները. միայն ակտիվ գիտական միջավայրում է հնարավոր պատրաստել բարձր որակավորում ունեցող, և գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող ստեղծարար մասնագետներ: Անհրաժեշտ է ստեղծել ԳՏՃՄ-ասպիրանտական դպրոց (օրինակ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին կից)՝ գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (ԳՏՃՄ. Science, Technology, Engineering and Mathematics (STEM)) բնագավառներում ասպիրանտական ընդհանրացված ուսուցում իրականացնելու նպատակով: ԳՏՃՄ-ասպիրանտական դպրոցում անհրաժեշտ է նախատեսել պետական նպատակային ասպիրանտական տեղեր և յուրաքանչյուր ասպիրանտի համար սահմանել Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի կրկնակի չափով կրթաթոշակ, ինչպես նաև հետազոտական և այլ ծախսերի համար յուրաքանչյուր ամիս հատկացնել նվազագույն ամսական աշխատավարձի չափով ֆինանսական միջոցներ: Բացի դրանցից, պետք է մշակել և ներդնել օտարերկրյա պետությունների կամ միջազգային առաջատար գիտական կամ գիտակրթական կենտրոններում նպատակային ասպիրանտական կրթության և հետդոկտորանտուրայի կազմակերպման մեխանիզմներ.

4) **բարելավել ասպիրանտների և երիտասարդ գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանները:** Նպատակն ասպիրանտուրայում սովորողների և գիտական ատենախոսությունը նոր պաշտպանած գիտական

աշխատողների (հետդոկտորանտների) իրավունքների ճանաչումն ու համապատասխան պայմանների ապահովումն է՝ որպես գիտելիքի ստեղծման գործընթացում լիարժեք դերակատարների: Անհրաժեշտ է ասպիրանտուրայում սովորողների կրթաթոշակը հավասարեցնել Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձին, ինչպես նաև հետազոտական և այլ ծախսերի համար յուրաքանչյուր ամիս հատկացնել նվազագույն ամսական աշխատավարձի կեսի չափով ֆինանսական միջոցներ: Հետդոկտորանտների աշխատավարձը պետք է սահմանել նվազագույն ամսական աշխատավարձի 1.5-ի չափով, իսկ հետազոտական և այլ ծախսերի համար յուրաքանչյուր ամիս հատկացնել նվազագույն ամսական աշխատավարձի 0.75-ի չափով ֆինանսական միջոցներ: Բացի այդ, պետք է շարունակական դարձնել «Մատչելի բնակարան՝ երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» սոցիալական բնակարանային ապահովության ծրագիրը:

5) *շարունակել ասպիրանտների անհատական խրախուսման և երիտասարդ գիտական աշխատողների հետազոտությունների աջակցության պետական ծրագրերը:*

Անհրաժեշտ է շարունակել ասպիրանտների անհատական խրախուսման 12 ամսյա ծրագիրը և փոխարենը ներդնել եռամյա ֆինանսավորման ծրագիր, համաձայն որի ասպիրանտները կամ հայցորդները կարող են իրենց ուսուցման որևէ փուլից դիմել դրամաշնորհի՝ ստանալով շարունակական ֆինանսավորում ինչպես աշխատավարձի տեսքով, այնպես էլ հետազոտության հետ կապված ծախսերի մասով: Առաջինը՝ մեկնարկային հետազոտական դրամաշնորհների ծրագիրն է, երբ դրամաշնորհը հատկացվում է նշանակալի նվաճումներ ունեցող երիտասարդ գիտաշխատողներին (հիմնական հետազոտող) գիտական կարիերայի մեկնարկային փուլում՝ հետազոտական խմբեր ձևավորելու և նախընտրած թեմայով հետազոտություններ իրականացնելու համար: Դրամաշնորհը պետք է հատկացվի մինչև 36 ամիս ժամկետով՝ հետագայում երկարացման հնարավորությամբ, և ծրագրին դիմելու իրավունք պետք է ունենան գիտական աստիճան ունեցող անձինք՝ գիտական աստիճանը ստանալուց ոչ ուշ, քան 7 տարի հետո: Երկրորդը՝ գիտահետազոտական խմբերի ամրապնդմանն ուղղված դրամաշնորհների ծրագիրն է, երբ դրամաշնորհը հատկացվում է նշանակալի նվաճումներ ունեցող գիտաշխատողին (հիմնական հետազոտող) գիտական կարիերայի հաջորդ փուլում՝ հետազոտական խումբը համախմբելու կամ ամրապնդելու նպատակով: Դրամաշնորհը պետք է հատկացվի մինչև 60 ամիս ժամկետով և ծրագրին դիմելու իրավունք պետք է ունենան գիտական աստիճան ունեցող անձինք՝ գիտական

աստիճանը ստանալուց ոչ շուտ, քան 5 տարի և ոչ ուշ, քան 12 տարի հետո: Վերոնշյալ երկու ծրագրերի նպատակը ոչ միայն գիտահետազոտական խմբերի աշխատանքների ֆինանսավորումն է, այլ նաև՝ երիտասարդ ղեկավարների մոտ կառավարչական հմտությունները զարգացնելը, ինչը շատ կարևոր է գիտության կառավարման ոլորտում անհրաժեշտ սերնդափոխությունն ապահովելու համար:

6) բարելավել գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանները: Առաջին հերթին անհրաժեշտ է բարձրացնել գիտական աշխատողների աշխատանքի վարձատրության չափը՝ սահմանելով գիտաաշխատողի նվազագույն աշխատավարձ՝ հանրապետության նվազագույն աշխատավարձի 2.0 չափով և համապատասխանաբար ավելացնելով գիտական աշխատողի բոլոր տարակարգերի դրույքաչափերը: Պետք է շարունակել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների, այդ թվում նաև երիտասարդ՝ մինչև 35 տարեկանների անհատական խրախուսման ծրագիրը: Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների հետազոտությունների իրականացման հնարավորությունների շարունակականությունն ապահովելու նպատակով մեկնարկային և ամրապնդման դրամաշնորհների ծրագիրը պետք է համալրվի ևս մի նոր ծրագրով: Դա առաջատար դրամաշնորհային ծրագիրն է, երբ դրամաշնորհը հատկացվում է վերջին 10 տարիների ընթացքում բարձր արդյունավետությամբ աշխատող և նշանակալի նվաճումներ ունեցող գիտաաշխատողներին (հիմնական հետազոտող)՝ նոր գաղափարների վրա հիմնված հետազոտական ծրագրերի իրականացման համար: Այս դրամաշնորհային մրցութի դեպքում կարելի է տարանջատել մեկ հիմնական հետազոտողի կողմից առաջարկվող ծրագրերի մրցույթը մինչև երեք հիմնական հետազոտող երեք տարբեր կազմակերպություններից առաջարկվող ծրագրերի մրցույթից: Դրամաշնորհը պետք է հատկացվի մինչև 60 ամիս ժամկետով և ընտրությունը պետք է կատարվի բացառապես հիմնական հետազոտող(ներ)ի աշխատանքի արդյունավետության և առաջարկվող ծրագր(եր)ի գիտական կարևորության հիման վրա: Առաջարկվող մրցույթներին զուգահեռ անհրաժեշտ է նաև արդիականացնել հանրապետության գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ենթակառուցվածքները, ստեղծել եզակի գիտական սարքավորումների կոլեկտիվ օգտագործման կենտրոններ: Պետք է շարունակել, մասնավորապես, գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերմանն ուղղված մրցույթները՝ ավելացնելով պետական բյուջեից

այդ նպատակի համար հատկացվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև միջազգային կառույցների հետ իրականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացման համատեղ ծրագրեր.

7) մշակել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված հասարակության մեջ գիտության վարկի ու գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի գրավչության բարձրացմանը: Այս նպատակի իրականացումը պահանջում է զգալի ժամանակ և ենթադրում է ոչ միայն գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության և աշխատանքային պայմանների բարելավում, այլ նաև հասարակության գիտակցության մեջ գիտության դերի և գիտնականի հեղինակության բարձրացում: Ընդ որում, գիտության քարոզչությունը պետք է ուղղված լինի հասարակության բոլոր տարիքային խմբերին՝ սկսած դպրոցական տարիքից: Մասնավորապես, առաջնահերթ խնդիր է գիտության տարբեր բաժիններին նվիրված տարբեր տարիքային խմբերի համար տարատեսակ մեդիա ռեսուրսների (վիդեո, ինտերակտիվ կամ տպագիր ռեսուրսներ) կիրառմամբ նյութերի պատրաստման և տարածման, ինչպես նաև գիտության մասսայականացման այլ միջոցառումների իրականացման հարցը: Բացի այդ, անհրաժեշտ է նաև ռեսուրսներ ստեղծել հայրենական և համաշխարհային գիտության ու տեխնոլոգիաների նվաճումները հասարակությանը ներկայացնելու համար՝ ցույց տալով նաև այն տնտեսական շահը, որը ստանում և կարող են ստանալ տնտեսությունն ու հասարակությունը գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործման դեպքում: Գիտական և գիտատեխնիկական գործունեության դերի և կարևորության ընկալման բարձրացման նպատակով անհրաժեշտ է ստեղծել տարատեսակ հարթակներ, որոնցում գիտնականների կողմից կտրվեն հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի գիտականորեն հիմնավորված և անաչառ մեկնաբանություններ կամ պատասխաններ (որպես օրինակ՝ սննդի անվտանգության, ջրերի մաքրության, հասարակական գործընթացի օրինաչափությունների և այլն):

10. Վերոնշյալ լուծումները պետք է նպատակաուղղված լինեն հետևյալ նպատակային ցուցանիշների³ ձեռքբերմանը՝

1) պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների տարիքային բաշխման 4 միջակայքերի՝ մինչև 35, 35-44, 45-54 և

³ Նպատակային ցուցանիշների ձեռքբերման համար ընտրվել են 2022, 2025 թվականները և հեռանկարում 2030 թվականը, քանի որ պետական բյուջեից ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հնարավոր է ներդնել սկսած 2021 թվականից:

55-64 տարեկաններ, մասնաբաժինները պետք է մոտ լինեն 1991 թվականի համապատասխան բնութագրիչներին: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին ներդրած մի շարք նախաձեռնությունների արդյունքում մինչև 35 տարեկանների մասնաբաժինը 2018 թվականի համար գերազանցում է 1991 թվականի ցուցանիշը: Հետևաբար, քանի որ մինչև 35 տարեկանների համար կիրառելի միջոցառումները շարունակական են, ապա պետք է սահմանել 3 տարիքային միջակայքերի՝ 35-44, 45-54 և 55-64 տարեկանների նպատակային ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 2).

Տարիքային միջակայք, տարեկան	Չափման միավոր	Տարի		
		2023թ.	2025թ.	2030թ.
35-44*	%	20.5-21.5	21.5-23.0	25.5-30.0
45-54*	%	15.0-15.5	17.5-18.0	28.0-32.5
55-64*	%	19.5-20.0	20.0-20.5	21.0-22.0

*) Որպես հիմք ընդունվել են 2018 թվականի տվյալները և ենթադրվել է 2030 թվականին հասնել 1991 թվականի համապատասխան ցուցանիշներին՝ 2026 թվականից նախատեսելով տարեկան փոփոխությունների ավելի արագ տեմպ:

Աղյուսակ 2. Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների մասնաբաժինների կանխատեսումները 2023, 2025 և 2030 թվականների համար:

2) օտարերկրյա պետությունների կամ միջազգային գիտական կամ գիտակրթական կենտրոններում պետք է իրականացնել նպատակային ասպիրանտական ուսուցում և հետդոկտորանտուրա՝ սահմանելով հետևյալ նպատակային ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 3):

Ծրագրի անվանում	Չափման միավոր	Տարի		
		2022թ.	2025թ.	2030թ.
Օտարերկրյա պետությունների կամ միջազգային գիտական կամ գիտակրթական կենտրոններում ասպիրանտների թվաքանակը*	մարդ	24	48	100
Օտարերկրյա պետությունների կամ միջազգային գիտական կամ գիտակրթական կենտրոններում հետդոկտորանտների թվաքանակը*	մարդ	24	48	100

*) Որպես հիմք ընդունվել են 2022 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներում չորսական նպատակային ասպիրանտական և հետդոկտորանտական տեղ, իսկ 2030 թվականին՝ նաև բոլոր մասնագիտություններով:

Աղյուսակ 3. Օտարերկրյա պետությունների կամ միջազգային գիտական կամ գիտակրթական կենտրոններում նպատակային ուսուցման ասպիրանտների և հետդոկտորանտների թվաքանակների կանխատեսումները 2022, 2025 և 2030 թվականների համար:

11. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի ներդնել գիտական կարգերի պատրաստման պետական պատվերի հստակ մեխանիզմ, կբարձրանա գիտական աստիճանի հայցման ատենախոսությունների

մասնագիտական մակարդակը, կփոխվի գիտական ներուժի կադրային կառուցվածքը և կապահովվի գիտության ոլորտում կադրերի բնականոն արտահոսքն ու ներհոսքը՝ պահպանելով գիտական աշխատողի ազատ տեղաշարժի իրավունքը:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

12. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

2) արտաբյուջետային միջոցները, այդ թվում՝ դրամաշնորհները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների գիտական և (կամ) գիտակրթական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային գիտական կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

Հավելված N 2
 ՀՀ ԿԳՄՍ նախարարի
 2020 թ. ապրիլի 3-ի
 N 414-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱԴԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱՍԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Անկապիկող արդյունքը	Ֆինանսավորման աղբյուրը	Պատասխանատու կադրողները	Կատարման ժամկետը
		3	4	5	6
1.	«Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտական տեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծի մշակում	Ասպիրանտական տեղերի հատկացման գործընթացի հստակեցում, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կարգային ներուժի վերարտադրության արդյունավետության բարձրացում	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, Բարձրագույն որակավորման կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2020 թ.
2.	Հասարակության մեջ գիտության վարկի ու գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի գրավչության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում	Գիտության տարբեր բաժիններին նվիրված մանկական հանրագիտարանների, գիտահանրամատչիլ գրականության և ամսագրերի, հայրենական և համաշխարհային գիտության ու տեխնոլոգիաների նվաճումների նվիրված	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Սկսած 2020 թ.

		հանրային հեռուստատեսության և ռադիոյի ծրագրերում հատուկ եթերաժամի առկայություն			
3.	Ասպիրանտների և երիտասարդ գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավման, այդ թվում՝ նաև հետդոկտորանտուրայի մեխանիզմների մշակում և ներդրում	Ասպիրանտուրայում սովորողների և հետդոկտորանտների իրավունքների ճանաչում ու համապատասխան պայմանների ապահովում	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, Բարձրագույն որակավորման կոմիտե, ՀՀ գիտությունների ակադեմիա (համաձայնությամբ)	Սկսած 2021 թ.
4.	Երիտասարդ գիտական աշխատողների հետազոտությունների մեկնարկային դրամաշնորհային ծրագրի իրականացում	Գիտահետազոտական խմբերի աշխատանքների ֆինանսավորում, ինչպես նաև՝ գիտական կարիերայի մեկնարկային փուլում երիտասարդ գիտական աշխատողների խրախուսում	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Սկսած 2021 թ.
5.	Գիտական աշխատողների գիտահետազոտական խմբերի համախմբման ուղղված դրամաշնորհային ծրագրի իրականացում	Գիտահետազոտական խմբերի աշխատանքների ֆինանսավորում, ինչպես նաև՝ երիտասարդ ղեկավարների մոտ կտրավարչական հմտությունների զարգացում	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	Սկսած 2021 թ.
6.	Գիտական աստիճանաշնորհման գործընթացում գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ու դրանց գիտական խորհուրդների դերի և պատասխանատվության բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակում և ներդրում	Ատենախոսությունների մասնագիտական մակարդակի բարձրացում, դրանց թեմաների համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններին ու տնտեսության պահանջներին	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, Բարձրագույն որակավորման կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2021 թ.

7.	<p>Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին կից՝ ԳՏՀՄ բնագավառների ընդհանրացված ասպիրանտական ուսուցման դպրոցի ստեղծում</p>	<p>Գիտության վրա հիմնված կրթության ներդրում, բնագիտության և ճարտարագիտության (ԳՏՀՄ. Science, Technology, Engineering and Mathematics (STEM)) բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխան ասպիրանտական ընդհանրացված ուսուցման դպրոցի ստեղծում</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե</p>	<p>Սկսած 2021 թ.</p>
8.	<p>Օտարերկրյա պետությունների կամ միջազգային առաջատար գիտական կամ գիտակրթական կենտրոններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նպատակային ասպիրանտական ուսուցման և հետդոկտորանտուրայի իրականացման պայմանների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում</p>	<p>Ասպիրանտական ուսուցման և երիտասարդ գիտական աշխատողների մասնագիտական մակարդակի բարձրացման և երիտասարդ գիտական աշխատողների շարժունության մեխանիզմների ներդրում</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, Բարձրագույն որակավորման կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>Սկսած 2022 թ.</p>
9.	<p>Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների առաջատար դրամաշնորհային ծրագրերի իրականացում</p>	<p>Գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավում</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գիտության կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>Սկսած 2023 թ.</p>